Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
02 ապրիլի 2025թ. N 121 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի ապրիլի 8–ից

ECCO խանութների ցանցում կատարված վճարումների համար idcoin-ի տրամադրման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 08.04.2025թ-ից 08.06.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Վճարում՝** Նախքան սույն արշավը և արշավի ընթացքում թողարկված քարտերով վճարում և Հաճախորդների կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով և առցանց կայքերում կատարված QR վճարումները):
1.3 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով կիրականացնի քարտով կամ Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) QR վճարում ECCO խանութների ցանցի՝ Ծիծեռնակաբերդի խճ. 3 տարածք 6 (ECCO Դալմա) և Հյուսիսային պողոտա 6/15 (ECCO Հյուսիսային) հասցեներում:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Արշավի պայմաններ.

2.1 08.04.2025թ-ից 08.06.2025թ-ը ներառյալ ECCO խանութների ցանցում կատարված QR և քարտային Վճարումների դիմաց Հաճախորդները կստանան 20% idcoin (ներառյալ հարկերը):
2.2 Արշավը գործում է միայն չզեղչված տեսականու համար:
2.3 Յուրաքանչյուր օրացույցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար idcoin-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտահարկի գանձումից հետո: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:
2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: